ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 04-Ա

« 04 » ՀՈՒՆՎԱՐԻ 2024Թ.

ԱՎԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N259-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով և հիմք ընդունելով Ավետ Հայրապետյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2024 թվականի հունվարի 5-ից Ավետ Մարտինի Հայրապետյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր մինչև 2029 թվականի հունվարի 5-ը ժամկետով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում Ավետ Հայրապետյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Reversable Signature

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Ք.Եղեգնաձոր

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ